«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարանում*

Առարկան՝ *Դասվար*

Հետազոտող ուսուցիչ՝ *Արփիկ Հակոբյան*

Ուսումնական հաստատություն՝ *Մասիսի միջնակարգ դպրոց*

Երևան 2023

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հաշտվետվություն	
Հետազոտությունն իրականացնող ուսուցչի տվյալներ	
Անուն, ազգանուն	Արփիկ Հակոբյան
Աշխատավայրը(դպրոցի լրիվ անվանումը)	Մասիսի միջնակարգ դպրոց
Մասնագիտություն	Ուսուցչուհի
Հեռախոսահամար	093-25-68-68
Էլ. հասցե	arpik_hakobyan@mail.ru
Դասավանդվող առարկա (առարկաներ)	Դասվար

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիրքը մարդու համար անհատնում գիտելիքների աղբյուր է: Միշտ էլ դպրոցի հիմնական խնդիրներից մեկը եղել և մնում է իր սաներին սովորեցնել սիրել գիրքը, օգտվել նրանից, անընդհատ նոր գիտելիքներ քաղել այնտեղից: Իսկ դրան կարելի է հասնել աշակերտների մեջ ընթերցանության կարողություն մշակելով, որովհետև ընթերցանության կարողությունը մարդու մտավոր զարգացման ու առաջընթացի հիմնական նախապայմանն է: Այս առումով ընթերցողական կորողությունների ձևավորումը տարրական դասարաններում ոչ միայն աշակերտների մտավոր ու բարոյական զարգացման հիմնական միջոցներից մեկն է, այլև մայրենիի դասընթացի գլխավոր նպատակներից մեկը, որովհետև այստեղ է, որ այն հիմնադրվում ու մշակվում է, այստեղ է, որ այն երեխայի մեջ մտավոր զարգացման ուժ և կարողություն, բոլոր գիտելիքների դռները բացող կախարդական բանալին է դառնում: Որքան երեխաների մեջ ամուր ու հաստատուն դրվեն վարժ ընթերցանության կարողության մշակման հիմքերը, այնքան կարդալը երեխայի համար ավելի շուտ կդառնա գիտելիքների ձեռքբերման կարևոր ու անփոխարինելի միջոց:

Ընթերցանության դասը ոչ միայն պետք է գիտելիքներ տա, այլև խթանի նրանց ինքնուրույն մտավոր գործողությունը, ոչ միայն պետք է նոր գիտելիքներով ու տեղեկություններով հարստացնի նրանց մտավոր պաշարը, այլև զարգացնի նրանց տրամաբանական մտածողությունը և ինքնագործունեությունը:

Թեև առաջինից չորրորդ դասարաններում իրականացվող մայրենիի դասի բաղադրիչներն առանձին-առանձին և բոլորը միասին վերցրած նպաստում են նշված հիմնախնդրի լուծմանը, սակայն անհրաժեշտ է մշակել և իրականացնել ընթերցողական ճիշտ գործունեություն ծավալելու ունակ աշակերտի ձևավորման հատուկ տեխնոլոգիաներ, որոնք կարելի է իրականացնել ինչպես դասագործընթացում, այնպես էլ դասապատրաստման ընթացքում: Հենց այս գործընթացներում էլ պիտի ձևավորվի ընթերցանության միջոցով հետաքրքիր տեղեկություն ձեռք բերելու ուղղությամբ աշակերտների տարվածությունը, որը էլի ու էլի կարդալու ձգտման ամենաինքնատիպ միջոցն է:

Որպեսզի երեխաները հաճույքով ընթերցեն, պետք է բավարարվեն ներքոհիշյալ երեք հիմնական պահանջները.

1. ընթերցվելիք ուսումնական բնագրին կից տրվեն դիտողական-զննական նյութեր (նկարներ, գծագրեր, քարտեզներ, լուսանկարներ և այլն),

2. ուսումնական բնագիրն ունենա ճանաչողական արժեք. ընթերցելով նյութը՝ աշակերտն ձեռք բերի իր համար կարևոր, հետաքրքիր, անհրաժեշտ և մատչելի տեղեկություն,

3. ընթերցելու գործընթացին ուղեկցի կամ հաջորդի հետազոտական-որոնողական, մեկնողական աշխատանք. ընթերցել ոչ միայն վարժ, սահուն, արտահայտիչ կարդալ սովորելու, այլև որոշակի ուսումնագիտական նպատակներով:

Տարրական դպրոցում էականը կարդացածի իմաստի ըմբռնումն է, գլխավոր մտքի բացահայտումը, ենթատեքստի կռահումը, բառապաշարի հարստացումը և կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցանությունը:

Ատենախոսությունում արծածված խնդիրները համապատասխանում են նրան ներկայացվող ժամանակակից գիտամեթոդական պահանջներին՝ արդիականությանը, ուսումնասիրության առարկայի ընտրությանը, օբյեկտի բացահայտմանը, վարկածի հիմնավորմանը և նպատակի իրականացմանը:

Աշխատանքի նպատակն է բացահայտել երկրորդից չորրորդ դասարաններում սովորող երեխաների ինքնուրույն ընթերցանության միջոցով ընթերցելու հանդեպ հետաքրքրվածությունը և ձգտումը, քիչ ընթերցելու պատճառները, ինչպես նաև որոշել ընթերցանության հետ կապված առկա դժվարությունները և առաջարկել դրանք հաղթահարող մեթոդական պահանջ-կողմնորոշումներ:

Ուսումնասիրության օբյեկտ - Աշխատանքի շարադրման համար ուսումնասիրության օբյեկտ են ընտրվել տարրական դպրոցի մայրենիի գործընթացում իրականացվող ինքնուրույն ընթերցանության դասերը:

Ուսումնասիրության առարկան կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների զարգացումն է:

Ուսումնասիրության վարկածի համաձայն՝ կրտսեր դպրոցականների մեջ կծագեն ընթերցողական հետաքրքրություններ, եթե ինքնուրույն ընթերցանության դասագրքերում զետեղված նյութերի շուրջ տարվի վերլուծական-համադրական

համակարգված աշխատանք, կզարգանա նրանց ակտիվ բառապաշարը, կապակցված խոսք կառուցելու ունակությունը, կզարգանա լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը:

Ուսումնասիրության ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ *խնդիրները.*

1. Զնավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանք հիմնական միտքը՝ գաղափարը, հասկանալու, ենթատեքստը կռահելու, հերոսների գործողությունների տրամաբանությունն ըմբռնելու, դրանց շուրջ պարզ դատողություններ անելու կարողություններ:

2. Մաքրել, հղկել և հարստացնել երեխաների բառապաշարը, զարգացնել կապակցված խոսք կառուցելու ունակությունը:

3. Զնավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ:

Ուսումնասիրության համար *գիտամեթոդական հիմք* են ծառայել հայրենական մեթոդիստների՝ Ա. Տեր-Գրիգորյանի, Ջ. Գյուլամիրյանի հայոց լեզվի մեթոդիկաները, մայրենիի դասագրքերը, մեթոդական ուղեցույցները:

Հետազոտության տարբեր փուլերում կիրառվել են ուսուցման տարբեր մեթոդներ, հնարներ, մոտեցումներ՝ կրտսեր դպրոցում դաս վարել, դասալսումներ, մայրենիի դասերի և դասագրքերի վերլուծություն, զրույց, դիտում, մտագրոհ, քառաբաժանում, խառնված հերթականություն մեթոդական հնարը, խմբային աշխատանք:

Մեր աշխատանքի հետազոտական փուլը անցկացրել ենք Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոցում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ I

Ընթերցանությունը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար:

<<Դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գեղեցիկի, գրական խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը>>[1]:

Ընթերցանության հիմնախնդիրը միշտ էլ արդիական է եղել: Այն հուզել և հուզում է *բազմաթիվ մասնագետների (ոչ միայն հայ, այլև արտասահմանյան): Մանկավարժական* գրականության մեջ նշվում է. <<Կարդալ չսիրող, գրքի, հեքիաթի, պատմվածքի ունկնդրման և ընթերցման նկատմամբ ի սկզբանե անտարբեր երեխաներ չեն լինում: *Պարզապես անհրաժեշտ է մանկական ընթերցանության մանկավարժորեն ճիշտ և* նպատակային կազմակերպում>>[2]:

Անհնար է ծանոթանալ որևէ գիտության հիմունքների, առավել ևս դառնալ ժամանակակից կուլտուրայի պահանջների բարձրության վրա կանգնած մարդ, եթե կարդալ չգիտես: Շատ վաղ անցյալում ուսուցման միակ առարկան կարդալու ուսուցումն էր: Հետագայում, երբ զարգացան առանձին գիտությունները, երբ ստեղծվեց ուսուցման դպրոցական համակարգն իր բազմազան առարկաներով, կարդալը դարձավ այլ գիտություններին տիրապետելու, կուլտուրայի և տեխնիկայի բոլոր նվաճումները յուրացնելու ամենահիմնական միջոցը: Կարդալու ուսուցման որակից է կախված մյուս

առարկաների ուսուցման հաջողությունը, իսկ կարդալու հմտության հիմնական որակը որոշվում է կարդալու ուսուցմամբ տարրական դասարաններում:

<<Տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարանները ոչ միայն կարդալու ուսուցման, այլև երեխաների լեզվի զարգացման, աշխար-հաճանաչողական գիտելիքների հաղորդման ու դաստիարակության նպատակ են հետապնդում: Դրանք ընդգրկում են և՛ գաղափարական, և՛ գեղագիտական, և՛ բարոյական դաստիարակության հարցերը՝ առանց որոնց անհնարին է պատկերացնել կրթության և դաստիարակության համատեղ իրականացումը տարրական դասարաններում>> :

Ուսուցման գործընթացը պետք է կառուցվի աշակերտակենտրոն սկզբունքով՝ առաջնորդվելով գիտելիքի ձեռքբերում, դրա իմաստավորում և կիրառում, կիրառման ընթացքի վերլուծություն, եզրահանգումների կատարում, նոր գիտելիքի ձեռքբերում շղթայով:

Այսինքն՝ աշակերտը պետք է հանդես գա ոչ թե իբրև գիտելիքների ձեռք-բերման գործընթացի պասիվ մասնակից, այլ ակտիվ գործընկեր, գիտելիքների ձեռք բերող, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն:

Ուսուցումը պետք է իրականացվի իբրև ակտիվ, երկկողմանի մտավոր գործողություններով հագեցած մի գործընթաց, որի ժամանակ ոչ թե ուսուցիչը գիտելիքներ է հաղորդում, այլ աշակերտը ուսուցչի մանկավարժական վարպետության շնորհիվ ինքն է ձեռք բերում այդ գիտելիքները, ունակու-թյուններն ու հմտությունները: Այսինքն՝ ուսումնական գործունեության համար պասխանատու են և՛ ուսուցիչը, և՛ աշակերտը:

<<Տարրական դասարաններում մայրենի լեզվի դասերը կազմակերպվում են բացատրական ընթեցանության մեթոդով, որը դիդակտիկական բազմանույթ ձևերի ու միջոցների, մանկավարժահոգեբանական տեսանկյուններով հիմնավորված մեթոդների համակարգ է>>[3]:

Որպեսզի բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող դասն անարդյունավետ և ձանձրալի չլինի, կարևոր է իմանալ նրա բաղադրամասերից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Ա. Զրույց: Զրույցի տեսակներն ու կազմակերպման մեթոդիկան:Զրույցը բանավոր երկխոսության ձև է:

Ըստ նպատակների կարելի է տարբերել զրույցի հետևյալ տեսակները.

տեղեկատվական զրույց,ներգործող զրույց,համոզող զրույց, իրադրությունային զրույց: Մեթոդիկայում կարևորվում են ոչ միայն զրույցները, խորհրդատվու- թյունները, այլև իրադրությունային խաղերը, ուղեղային գրոհները, որոնք գործ-նականորեն նպաստում են ինքնուրույն խոսք կառուցելու կարողության մշակմանը և լիարժեք կապակցված խոսքի կառուցման գործընթացի համար յուրատեսակ նախապատրաստություն են դառնում:

<<Զրույցի կարևորությունն ուսուցման գործընթացում ընդգծել է Խ. Աբովյանը: Նա նշում էր զրույցի երկու կարևոր գործառույթների մասին, որոնցից առաջինն ուսկնդրին նախապատրաստում է ստեղծագործության գաղաափարի ընկալմանը՝ << բանալ զմիստ աշակերտներիի>> և երկրորդ ՝ երեխայի կենսա-փորձով ձեռք բերված գիտելիքների իմաստավորմանը նպատակաուղղված զրույց, որն աշակերտներին տալիս է խոսքի նմուշ, ձևավորում է զգացածը, տեսածը, ապրածը վերարտադրելու, դրանց շուրջ դատողություններ անելու կարողություններ>>[4]:

Բ.Բնագրի ընթերցում: Կարդալու տարրական կարողությունների ձևավորումը:Կարդալու ուսուցումը տարրական դասարաններում մայրենի լեզվի դասի հիմնական նպատակն է: Նրանք կարողանում են կարդալ փոքրիկ բնագրեր, պատասխանել բնագրի վերաբերյալ ուսուցչի տված հարցերին և դրանց օգնությամբ վերարտադրում են բնագրի բովանդակությունը: Կարդալու կարողու-թյունների մշակման արդյունավետությանը նախնական փուլում նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեկ տողն ընթերցելիս հմուտ ընթերցողի աչքերը կանգ են առնում 3-6 անգամ, որոնց ժամանակ տեղի է ունենում կարդացածի գիտակցում և հասկացում:

<<Հոգեբաններն առանձնացնում են կարդալու հմտությունների ձևավորման 3 փուլ՝ վերլուծական, համադրական և ավտոմատացված>>[5]:

<<Ուսուցչի գլխավոր հոգատարությունը ոչ թե կարդալու արագությունը, այլ ճշտությունը պետք է լինի, իսկ արագությունը կգա ինքնըստինքյան՝ որպես արդյունք կարդալու բազմաթիվ ու բազմապիսի վարժությունների>>[6] :

Գ. Բառային աշխատանք: <<... բառն ամենուր է, ուր կա միտք, զգացմունք: Սակայն բառը պատահական միջոց չէ պատրաստի իմաստ արտահայտելու համար, ինչպես դատարկ բաժակը, որի մեջ կարելի է լցնել ցանկացած հեղուկ: Ամեն մի բառ մարդու աշխարհաճանաչման ու ինքնաճանաչման ճանապարհին մի աստիճանիկ է, մարդկային կյանքի ու մտածողության զարգացման յուրահատուկ վկայություն>>[7]:

Բառային աշխատանքի նպատակն է՝ անծանոթ բառերի ու դարձ-վածքների բացատրությունը, ծանոթ բառերի հոմանիշների ու հականիշների ընտրությունը, ծանոթ արմատներով նոր բառերի կազմումը, դրանց յուրացումն ու ակտիվացումը: <<Բառապաշարի հարստացման ուղղությամբ աշխատանք տանելիս անհրաժեշտ է հետամուտ լինել, որ երեխաները խոսքում գործածեն ածական-ներ, մակբայներ, կապեր ու ամենակարևորը՝ գործածեն ճիշտ, տեղին ու դիպուկ: Կարևոր է նաև խոսքի հարստացումը փոխաբերական իմաստ արտահայտող բառերով, արտահայտություններով, դարձվածքներով, իմաստուն ու թևավոր խոսքերով>>[8]:

<<Լավ կարդալը եղանակ ունի, նա մի տեսակ գնացական երգ է: Յուրաքանչյուր շեշտը և կետը զանգակի պես հնչում են երեխայի ականջին, հոգեբուխ երգի նման թափանցում մարդկանց հոգու խորքերը, թրթռացնում բոլոր նուրբ լարերը նրա մոտ>>[9]:

Դ. Ընթերցած նյութի բովանդակության վերարտադրում կամ պատմում: Պատմելու ուսուցումը բավականին բարդ գործընթաց է և մայրենի լեզվի դասի կարևոր փուլ: Երեխաներին պատմել հանձնարարելուց առաջ անհրաժեշտ է նրանց նախապատրաստել պատմելուն: Այս փուլի շրջանցումը կամ թերի կատարումը բերում է նրան, որ երեխաները բնագիրը սովորում են ոչ թե հաս-կանալով պատմել, այլ վերարտաադրում են անգիր: Իսկ դա ոչ միայն թույլ չի տալիս հասնել մայրենիի դասի գլխավոր նպատակներից մեկի՝ խոսք կառուցելու կարողության մշակմանը,

այլն երեխաները չեն հասկանում իրենց կարդացածի իմաստը, չեն ըմբռնում գլխավոր միտքը, ենթատեքստը, չեն կարողանում դասեր քաղել ընթերցած ստեղծագործությունից: Այսինքն՝ ընթերցանությունը դառնում է աննպատակ:

<<Ընթերցված նյութը երեխան կարող է ինքնուրույն պատմել միայն այն ժամանակ, երբ նա հասկացել է կարդացածը, իսկ հասկանալով պատմելուն պիտի նախապատրաստել>>[10]:

<<Երբ դասանյութն անձնային բնույթ չի ստանում աշակերտի համար, ապա նա լավագույն դեպքում լսողի կամ դիտող տեսք է ընդունում: Հետազոտական ռեֆլեքսը սկսում է գործել միայն այն ժամանակ, երբ աշակերտի մեջ առաջանում է հետաքրքրություն, տարակուսանք, կասկած, զարմանք, ենթադրություն և այլն>>[11]:

Ե. Ամփոփում: Ամփոփումը հիմնականում իրականացվում է հարցերի միջոցով: Հետևաբար ամփոփիչ զրույցի համար ընտրված հարցերը պետք է ընդհանրացնող-համակարգող լինեն, որպեսզի երեխաներին մղեն պատաս-խանելիս նաև որոշակի հետևություններ, մտահանգումներ կատարելուն: Այս դասերը, որպես կանոն, կազմակերպվում են թեմատիկ խմբի կամ որևէ թեմայի ավարտից հետո՝ դրանցում զետեղված նյութերից սովորողների ձեռք բերած գիտելիքներն ու կարողություններն առավել խորությամբ ամփոփելու, համա-կարգելու նպատակով:

<<Տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարանները սովորաբար կազմված են լինում երկու հիմքով՝ շարժական և անշարժ>>[12]: Առաջին դեպքում նյութերը դասագրքում զետեղված են ազատ ընտրությամբ՝ ժողովածուի սկզբունքով, և դասավանդելիս ուսուցիչը կարող է դրանք ազատ կերպով տեղաշարժել, ետ ու առաջ զցել, անցնել իր նախընտրած հաջորդականությամբ՝ նկատի ունենալով երեխաների հետաքրքրությունը, նյութերի մեջ եղած բովանդակության կամ ժանրային նմանություններն ու տարբերությունները և այլն: Շարժական հիմքով կազմված ընթերցարանները սովորաբար մեթոդական մշակումներ չեն ունենում, իսկ եթե կան էլ, ապա դրանք նյութերի տեղա-բաշխման կամ մշակման հաջորդականության որոշման համար վճռվող նշանակություն չունեն:

Անշարժ հիմքով կազմված ընթերցարաններում նյութերը տրված են թեմատիկ խմբավորումներով և մոտավորապես այն հաջորդականությամբ, ինչ հաջորդականությամբ որ դրանք պետք է ուսումնասիրվեն դասավանդման ընթացքում: Նախ անհրաժեշտ հաջորդականություն ու աստիճանականություն է մտցվում թեմատիկ խմբերի միջև, որոշվում է, թե ինչ հաջորդականությամբ պետք է դրանք ուսումնասիրվեն, իսկ ապա անհրաժեշտ հաջորդականություն է ստեղծվում նաև թեմատիկ խմբի ներսում՝ նրա մեջ ընդգրկված նյութերի ուսումնասիրման համար որոշակի կարգ ու աստիճանականություն հաստատելու նպատակով:

Ընթերցարաններում զետեղված նյութերի այդ թեմատիկան առաջադրվում է ծրագրով և ըստ դասարանների աստիճանաբար բարդանում է՝ ընդգրկելով կյանքի նորանոր ոլորտներ, սակայն թեմատիկայի որոշման հիմնական սկզբունքը՝ երեխայի ճանաչողության հնարավորությունների ու ըմբռնման կարո-ղությունների հաշվառումը, մնում է անփոփոխ: Ընթերցարաններում սովորաբար 20-25 տոկոսի չափով ավելի շատ նյութեր են տրվում, քան ուսումնական տարվա ընթացքում կարելի է անցնել կամ դասարանային մշակման ենթարկել: Ուսուցիչը, տեղական պայմաններից ելնելով, առանձին նյութեր կարող է բաց թողնել կամ հանձնարարել լրացուցիչ ընթերցման համար, փոխել լրացուցիչ և հիմնական մշակման համար հանձնարարվող նյութերի տեղերը, որոշ նյութեր տեղաշարժել՝ հատկապես տոնական օրերի հետ կապված նյութերը և այլն: Սակայն այս մասնակի տեղաշարժերը չեն խախտում տրված նյութերի կայուն հաջորդականությունը, դրանց միջև եղած տրամաբանական և թեմատիկ կապերը:

<<Ընթերցարանի անշարժ հիմքը հնարավորություն է ընձեռում նյութերի մեթոդական և լեզվական մանրամասն մշակումներ տալու՝ տրամաբանական և լեզվական աշխատանքի համապատասխան հարցերով ու առաջադրանքներով, նյութի գեղագիտական, գաղափարական, բարոյական ու ճանաչողական կողմերը ճիշտ հասկանալու և դրանցից որոշակի հետևություններ անելու համար անհրաժեշտ աշխատանքի ցուցումներով>>[13]:

Տարրական դասարանների թեմատիկ խմբերի ներսում նյութերի մասնակի տեղաշարժերը միանգամայն հնարավոր ու թույլատրելի են:

«Ինքնուրույն ընթերցանության» դասաժամերի դերը կարդալու կարողության զարգացման գործում հարցաթերթիկի վերլուծություն

Առաջին դասարանում աշակերտներն ուսումնասիրում են «Գրական ունկնդրում և խոսք»: Մայրենիի առարկայական չափորոշիչն ու ծրագրերը կարևորում են աշակերտների խոսքի զարգացումը, մասնավորապես հաղորդակցման կարողությունների ձևավորման խնդիրների տեղի և դերի որոշման հարցում: «Գրական ունկնդրում և խոսք» դասաժամի նպատակն է առաջին հերթին աշակերտների խոսքի և մտածողության զարգացմանը, լեզվի հաղորդակցական գործառույթի իրականացումը, կապակցված խոսքի ձևավորումը, բառապաշարի հարստացումը: Գրքում տեղ գտած հեքիաթները, մանկական պատմվածքներն ու բանաստեղծությունները բովանդակալից կդարձնեն գրաճանաչության ողջ ընթացքը, ինչպես նաև կլրացնեն կարդալու և հաղորդակցվելու կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները: «Գրական ունկնդրում և խոսք» առարկան նպաստում է նաև աշակերտների կարդալու կարողության զարգացմանը:

Երկրորդ, երրորդ և չորրորդ դասարաններում, շաբաթական մեկ անգամ անցկացվում է «Ինքնուրույն ընթերցանության» դասաժամը: «Ինքնուրույն ընթերցանության» դասագրքերում զետեղված նյութերը հնարավորություն են տալիս ճանաչելու աշխարհը, բավարարելու հետաքրքրությունները և ավելի ընդարձակելու դրանց շրջանակները, ձեռք բերել ինքնարտահայտման նոր հնարավորություններ: Եվ այս ամենը փոխկապակցված է, որի արդյունքնում աշակերտը ձեռք է բերում ճիշտ խոսքի կառուցման հմտությունները, որն էլ խթանում է կարդալու կարողության զարգացմանը:

«Բանավոր խոսքի զարգացումը ինքնուրույն ընթերցանության դասաժամերին» թեմայով մագիստրոսական ատենախոսության հետազոտությունն անցկացնելու համար

կազմել ենք դասվարներին հասցեագրված հարցաթերթիկ և տարրական դասարանների աշակերտների հետ անցկացրել հարցազրույց: Կիրառել ենք զրույցի, հարցաթերթիկի մեթոդները: Հետազոտության նպատակն էր պարզել՝ Ինչպիսի՞ ստեղծագործություններ են սիրում կարդալ կրտսեր դպրոցականները:

- Որքանո՞վ են խթանում «Ինքնուրույն ընթերցանության» դասաժամերը կարդալու կարողության զարգացմանը
- Տարրական դասարանի աշակերտների տեղեկացվածությունը գրական ստեղծագործություններին:

Մեր կողմից իրականացվել է հարցում Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոցում, որին մասնակցել են 2-4 դասարանների աշակերտները: Ընդհանուր թվով 36 աշակերտ:

Աշակերտների հետ կապված հետազոտությունը անցկացրել ենք 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններում զրույցի մեթոդով, որի ընթացքում հնչեցրել ենք հետևյալ բովանդակությամբ հարցեր.

1. **Ձեզ դու՞ր են գալիս «Ինքնուրույն ընթերցանության» դասաժամերը.**







Երկրորդ դասարանցիների շրջանակներում այս հարցի շուրջ արված հարցման արդյունքները ցույց տվեցին, որ աշակերտներին դուր են գալիս «Ինքնուրույն ընթերցանության» դասաժամերը, քանի որ ընկերների հետ կարող են կազմակերպել հետաքրքիր, ուրախ խաղեր և մրցույթներ: «Ինքնուրույն ընթերցանության» դասագիրքը շատ է դուր եկել երկրորդ դասարանի աշակերտներին իր բովանդակությամբ՝ հեքիաթներով, առած- ասացվածներով, հանելուկներով և առակներով:

Ինչպես վկայում են հարցման տվյալները՝ «Ինքնուրույն ընթերցանության» դասաժամերը դուր են գալիս երրորդ դասարանցիների մեծամասնությանը: Հարցմանը մասնակցած աշակերտները նշեցին, որ թեմաները շատ հետաքրքիր են ընտրված և իրենց դուր են գալիս: Յուրաքանչյուր թեմատիկ խումբ ունի իր առաջադրանքները և ավարտվում է ամփոփիչ հարցերով: «Ինքնուրույն ընթերցանության» դասաժամին կատարում են խմբային և անհատական աշխատանքներ և նկարում են:

Չորրորդ դասարանի աշակերտների պատկերը գրեթե նույնն է: «Ինքնուրույն ընթերցանության» դասաժամերը դուր են գալիս գրեթե բոլոր աշակերտներին: Աշակերտները տպավորված խոսում էին, որ ընթերցանության գրքի շնորհիվ ծանոթացան ազգային և համամարդկային մշակույթի ժառանգությանը, երաժշտությանը, կերպարվեստի, քանդակագործության, կինոյի, թատրոնի, խոսքարվեստի վարպետներին:

2. «Ինքնուրույն ընթերցանության» դասաժամի ընթացքում կիրառվող մեթոդի ո՞ր ձևն է քեզ դուր գալիս.



Հարցմանը մասնակցած աշակերտների 70% -ը պատասխանել է «դերային խաղ», 5%-ը պատասխանել է «Բանավեճ, հարցազրույց», 25%-ը «Փոքր խմբերով աշխատանք»: Հարցմանը մասնակցած աշակերտների մեծամասնությունը ընտրել է «դերային խաղ» տարբերակը: Դերային խաղերի իրականացման ժամանակ աշակերտներին առաջարկվում է տարբեր ստեղծագործություններից կամ այլ իրադրություններից ընտրել զանազան դերեր, խաղալ կարճ խոսքային դրվագներ:

Չորրորդ դասարանի աշակերտների շրջանակում փոխվում է պատկերը: Մեծ թվով աշակերտներին դուր են գալիս փոքր խմբերով աշխատանքը, քանի որ առաջադրանքը հանձնարարվում է ոչ միայն ամբողջ դասարանին, այլև նախապես ձևավորված փոքրիկ խմբերի: Ինչպես աշակերտներն էին փաստում, այս մեթոդը խթանում է կարդալու կարողության զարգացմանը, ստեղծագործական մտքին:

Մեր պատկերացմամբ՝ պետք է դասի ընթացքում դասի կազմակերպի բանավեճեր հարցազրույցներ, տարաբնույթ երկխոսություններ, զարգացնել երեխայի մոտ վերարտադրելու կարողությունը, սեփական մտքերը արտահայտելու արտահայտելու, դատողություններ անելու ունակությունը:

3. «Ինքնուրույն ընթերցանության» դասաժամերին ժամանակ կիրառվող կարդալու ո՞ր տեսակն եք նախընտրում.





Հետազոտությանը մասնակցած աշակերտների 40%-ը պատասխանել են՝ «Դերերով կարդալու» տարբերակն են նախընտրում: Երկրորդ դասարանի աշակերտների կողմից կարևորվում է դերերով կարդալը, այն տալիս է դասին աշխուժություն և հետաքրքրություն, և իրենց դուր է գալիս տարբեր մարմնավորել կերպարներ:

Երրորդ և չորրորդ դասարաններում գրեթե պատկերը նույնն է: Հարցվածների մի մասն ասացին, որ բարձրաձայն կարդալու ընթացքում խոսքը ավելի է ամրապնդվում իրենց մոտ և ավելի դյուրին է հասկանալը, ըմբռնելը նյութի բովանդակությունը: Աշակերտների մի մասն էլ ընտրել է բացատրելով կամ մեկնաբանելով կարդալու տեսակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինքնուրույն ընթերցանության դասն իր կարևոր տեղն ունի ոչ միայն դասարանային, այլև ընդհանուր առմամբ, ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում: Ինչպես մայրենիի, այնպես էլ ինքնուրույն ընթերցանության դասերին գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ սեր է արթնանում մեր ժողովրդի ու հայրենիքի հանդեպ, նրանք հաղորդակից են դառնում հայոց լեզվի ճոխությանը, գեղեցկությանն ու ճկունությանը: Սա առավել ազատ գործընթաց է, որը մեծ հնարավորություն է տալիս ուսուցչին՝ լրացնելու և խորացնելու աշակերտների գիտելիքները, որի արդյունքում երեխաները մղվում են դեպի գիրքն ու ընթերցանությունը, դեպի ինքնուրույն, որոնողական գործունեությունը, փորձում են հաղթահարել կարդալու դժվարությունները:

Մայրենիի դասընթացում իրենց ուրույն տեղն են գրավում ինքնուրույն ընթերցանության դասաժամերը:Մի կողմից այդ դասաժամերի ընթացքում զարգանում են ընթերցողական հետաքրքրությունները, երեխաների աշխարհայացքը, նրանց գեղագիտական ճաշակը, երևակայությունը և ստեղծագործական միտքը, մյուս կողմից՝ իրագործվում են ծրագրային, չափորոշչային պահանջները, ձևավորվում են ակտիվ ընթերցողին անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:4-րդ դասարանում աշակերտները ծանոթանում են արվեստի տեսակներին,հիշատակման արժանի նշանավոր մարդկանց և նրանց ստեղծած մնայուն արժեքներին,որոնք խորհելու, վերլուծելու, նորը ստեղծելու առիթ են տալիս:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերն շատ կարևոր են: Ինքնուրույն ընթերցանության դասաժամերն ավելի շատ պայմաններ են ստեղծում բավականին մեծ ծավալով ստեղծագործական բնույթի աշխատանքներ կատարելու համար. ընթերցածի բովանդակության նկարագարդում, ապլիկացիա, ծեփակերտում, ստեղծագործության ներկայացում երաժշտական ձևավորմամբ, նկարաշարի ստեղծում և այլն:

Վերլուծելով 2-ից մինչև 4-րդ դասարանների պատասխանները՝ եկանք այն եզրահանգմանը, որ «Ինքնուրույն ընթերցանության» դասաժամերին երեխաներին ավելի դուր են գալիս հեքիաթները և առակները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Ինքնուրույն ընթերցանություն 2, Երևան 2010:
2. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա.« Ինքնուրույն ընթերցանություն 4, Երևան 2010:
3. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 2010:
4. Գյուլամիրյան Ջ., հոդված« Նախաշավիղ, 2010:
5. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում, Նախաշավիղ, Երևան, 2010:
6. Խարազյան Ռ., Ինչպես օգտագործել <<Ինքնուրույն ընթերցանության նյութեր>> ժողովածուն, Նախաշավիղ, 2010:
7. Խաչատրյան Ս.,Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը,Նախաշավիղ,2013:
8. Հայրապետյան Գ., Արամյան Ա.«Արտահայտիչ ընթերցանության ուսուցումը,Նախաշավիղ, 2010:
9. Հովսեփյան Վ.,Առաջադրանքների պահանջը կարդալու և հասկանալու կարողության ձևավորումը տարրական դպրոցում,Նախաշավիղ,2012:
10. Ղարիբյան Ար. և ուրիշներ, «Հայոց լեզվի մեթոդիկա» Հայպետ հրատ., Երևան, 1955:
11. Շահբազյան Տ., «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա», Երևան, 1958:
12. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
13. Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Երևան,1983:
14. Տեր-Գրիգորյան Ա.,Արտադասարանային ընթերցանություն, Երևան:
15. Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժության ընտիր երկեր, Երևան, Լույս, 1981:
16. Օհանյան Ն., Կարդալու կարողության զարգացումը կրտսեր դպրոցում, Նախաշավիղ, Երևան, 2005:
17. http://tzuk.am
18. http:/www.armspu.am
19. Google.am, «Внеклассное чтение в начальной школе».